


ԽՍԲԱԳՐԱԿԱՆ**ԻՆՉՈ՞Ւ ԵՆԵՂԵՑԻ Կ'ԵՐԹԱՄ**

Էտիպար Կէսթ, ներկայիս ամերիկեան է'ն ժողովրդային գրողներէն մէկը, որուն ոտանոցները և երգիծական կտորները միշտ կը հրատարակուին հարկւրաւոր օրաթերթերու մէջ, յօդուած մ'ունի յիշեալ վերնագրով «Տնը Էմերիզըն Մակալին»-ի Յունուարի թիւին մէջ:

Ես եկեղեցի կ'երթամ քանզի եկեղեցիներու վրայ հաւատք ունիմ: Ես կրօնական մօլեռանդութիւն չունիմ, և նոյն իսկ չեմ խորհիր թէ բոլոր եկեղեցի զացողները բարի են և չզացողները՝ վէշ: Բայց ես կ'ընդունիմ որ մարդ մը, որ ունէ մէկ եկեղեցիի կապուած է և կը յարգէ զայն, բարեկամական, խոհեմ, ուրիշներուն իրաւունքները և զգացումները նկատի առնող ըլլալու համար աւելի առիթներ ունի քան եկեղեցի չզացողը:

Ես եկեղեցի չեմ երթար վախի կամ պարտականութեան զգացում մը ունենալով. ես չեմ հաւատար թէ Աստուած կը սիրէ կանոնաւորապէս յաճախողները և հերետիկոս կ'անուանէ բոլոր չզացողները: Բոլոր աղին հողիները՝ թէ եկեղեցիէն ներս և թէ դուրս՝ պիտի վարձատրուին: Եկեղեցիին մէջ ես չատանգամ գտած եւ լսած եմ բաներ, որոնք ինծի համար ձանձրացուցիչ և ցասուժնաբեր եղած են: Բայց երբէք իմ հաւատքս չեմ կորսնցուցած ո՛չ եկեղեցիի նպատակին ո՛չ ալ ա-

նոր պաշտօնէութեան վրայ:

Ես եկեղեցի կ'երթամ առանց ակնկալելու թէ ես պիտի գովարանուիմ և փայփայուիմ հոն: Շատ մարդիկ նեղացեր են իրենց կրօնական պաշտօնեաներուն, քանզի իրենց չախտրժամ բաները լսած են անոնց բերնէն: Նոյն մարդերը իրենց չախտրժամ շատ մը բաներ կը տեսնեն և կը լսեն, բայց նորէն կը յաճախեն:

Անոնք գոհճիկ ներկայացումներու յաճախորդ եղած են իրենց ընտանեօք, ասոնք առօրեայ շուկայի գործաւնութիւնը շատ անգամներ վէշ տեսած են, բայց իրենց յոյսը տակաւին անոր վրայ դրած են. շատ անգամներ բարեկամներէ խտրուած են, բայց տակաւին կեանքի տեսական հաճոյքին համար անոնց բարեկամութիւնը կը փնտռեն: Միակ բանը որ կը բացատրէ անոնց այս գիրքը՝ իրենց ճաշակին չյարմարող կրօնական պաշտօնեայի մը գոյութիւնն է: Անոնք եկեղեցիին մէջ կատարելութիւն չեն գտներ, որովհետեւ իրենց փնտռած կատարելութիւնը այն մասնաւոր տիպն է, որ իրենց սեփական զաւգափարներու և առօրեայ ընթացքին կատարելապէս կը համաձայնի:

Ես եկեղեցի կ'երթամ որովհետեւ ես կուզեմ որ իմ զաւակներս հոն երթան: Ես կը փափայեմ որ անոնք այս կեանքը սովորական զրադումէն, խաղէն, զրօսանքէն աւելի բարձր գիտնան: Եկեղեցին միակ հաստա-

տուութիւնն է՝ որ անոնց պիտի սորվեցնէ թէ իրենք Աստուածային են:

Նս եկեղեցի կ'երթամ որովհետեւ կը հաւատամ անոր ծառայութեան: Կը հաւատամ թէ ան հասարակական կեանքի մէջ կենսական տարր մ'է: Նս կը հաւատամ թէ ո՛չ կեանքի որեւէ զբաղում, ո՛չ կառավարութիւն, ո՛չ ընկերային բարեօրո՞ման զործիչները և ո՛չ մէկ ուրիշ կազմակերպութիւն չեն կրնար կատարել անոր զործը: Մենք կրնանք խնդալ եկեղեցիին վրայ, բայց մեր մարդկութեան հիմնաքարը հոն կը գտնուի:

Նս եկեղեցի կ'երթամ որպէս զի Աստուծոյ մասին սորվիմ: Նս զԱյն չեմ երեւակայիր իբր մէկը՝ որ անմատչելի հեռու տեղեր կը բնակի, և որ օր մը պիտի յայտնուի իբր խիստ և խոժոռագէմ դատաւոր մը: Նս կը հաւատամ որ հոս Անոր մասին կրնանք զիտնալ: Կրօնքի պէտքը կայ: Մեզմէ շատերը կ'ուզեն՝ որ իրենց զաւակները լաւ կրօնական կրթութիւն մը առնեն: Ահա այս է եկեցիին էական պաշտօնը: Բայց մենք կ'սկսեալանք որ կրօնական պաշտօնեան մեզի աւելի լաւ եկեղեցի մը տայ: Կրօնականները շատ աւելի դիւրութեամբ պիտի տային զայն մեզի, եթէ մենք ալ աւելի լաւ և աւելի օգտակար աշխարհականներու խումբ մը տայինք: Նս եկեղեցի կ'երթամ՝ ո՛չ թէ միայն անոր համար որ ես անոր պէտք ունիմ, այլ նաեւ անոր համար՝ որ ան ինծի՝ պէտք ունի: Եկեղեցին պիտի մեռնէր եթէ մեզմէ իւրաքանչիւրը խորհէր թէ մեր պարտականութիւնը կը վերջանայ երբ դրամական վճարումները կատարենք: Եկեղեցին կանգուն կը մնայ իր մարդերով, ո՛չ թէ դրամով:

Մէկու մը համար շատ զիւրիւն է պատճառաբանել և ինքզինքը արդարացիլ եկեղեցի չերթալուն համար: Նս ինքս կրնամ շատ անգամ ընել այս: Գեղեցիկ առաւօտ մը կը նախընտրեմ դուրսը պտոյտ մը կատարել կամ խաղալ քան թէ եկեղեցի երթալ: Կ'ըսեմ թէ Աստուած կրնայ պաշտուիլ պայծառ երկինքի և կանանչ ծառերու տակ, ինչպէս նա և աղօտ կերպով լուսաւորուած շէնքերու մէջ: Բայց միակ դժուարութիւնը այս է. երբ ես կը խաղամ, կը պտուծիմ Աստուած պաշտելու մասին պզտիկ խորհուրդ մ'անգամ մաքէս չ'անցնիր:

Կրնամ ըսել թէ հովիւը իմ մէջս հետաքրքրութիւն չ'արթնցներ: Իմ չյաճախելս արդարանալի է, եթէ ես պերճախօս հետոր մը մտիկ ընելու կ'երթամ, ո՛չ թէ պաշտամունքի մասնակցելու:

Նախագահ Գուլիճ՝ իր վաղանցի միջոցին զիւղական եկեղեցիի մը մէջ ունկնդիրը եղաւ գիտատի ուսանողի մը, որ իր առաջին քարոզը կ'ուտար: Ան պէտք էր զիտցած ըլլար թէ երկրասարդ քարոյիչը իր չլսած և չզիտցած բաները չպիտի խօսեր: Ապահովաբար երգեցիկ խումբի մը հրապոյրն ալ չէր պատճառը իր յաճախելուն: Պաշտամունքը շատ պարզ էր: Եկեղեցիին մէջ շատ մը բաներ մեզ կըլնան հրապուրել, որպէսզի հոն երթանք: Բայց մոռնալու չենք՝ որ մենք պէտք է եկեղեցի երթանք մեր Արարիչը պաշտելու և պաշտամունքին մասնակցելու համար:

Եկեղեցին կը քննադատուի թէ ան միշտ դրամ կը մտերայ. աւելի առատաձեռն համայնք մը այս նուաստութիւնը պիտի ջնջէր: Շաբաթական մուրացող պաշտօնեայ մը կծծի մօղովուրդի մը կենդանի խորհրդանշանն է: Նս կ'երեւակայեմ թէ ոչ մէկ կզեր դրամ հանգանակելու գործէն չ'ախորժիր. ան պէտք է աս գործէն զերծ պահուի, որպէս զի իր այցելութիւնները հաճելի ըլլան: Պէտք է ամէն ոք եկեղեցի յաճախէ և տայ, որպէսզի անոր բոլոր թեթեւայ: Անոնք որ եկեղեցի կը յաճախեն կրկին բեռ կրելու պարտադրուած են: Անոնք հաստատութիւն մը կը պահեն ուրիշներուն համար, որ կ'ըսեն թէ իրենք անոր պէտք չունին: Բայց վերջը անոր կը զիմեն օգնութեան համար:

Նս կը խորհիմ թէ մենք եկեղեցի զայցողներս աւելի՛ կրնանք ըլլալ և պէտք է ըլլանք: Մենք մեր ներկայութեամբը և ձեռնադրութեամբը եկեղեցին հրապուրիչ պէտք է դարձնենք: Մենք յաճախ քննադատութեան առարկայ ենք արդարացիօրէն: Մենք պէտք է ցուցնենք թէ մեր կեանքը բան մը կ'արժէ. մենք պէտք է համոզում մը զոյացնենք թէ եկեղեցին իրական պէտք մը կը զօհանցէ մեր կեանքերուն մէջ:

Մենք պէտք է ցուցնենք թէ կրօնքը և եկեղեցի յաճախելը մեզ աւելի մարդկային աւելի սիրելի և աւելի բարեպէտ և քաջ կ'ընեն: Տարակոյտի օրերը, որ կը տարածուի, մեզ-

մէ՛ աշխարհականներէս կ'ելլէ ոչ թէ կղերներէ : Եկեղեցին՝ թէպէտ խծրծուած, քննադատուած, պզտիկ ցուցուած և ծաղրուած տակաւին կը պաշտպանէ ինչ որ ազնուագոյն է մեր մէջ. ան տակաւին մայրն է մեր մեծագոյն գաւազներուն :

Ես չեմ միանար անհաւատներուն և եկեղեցի չզացողներուն, քանզի ես յոյս մը չունիմ այն տեղուան մասին, որ առնօք զիս կուզին տանիլ : Ես կը տեսնեմ թէ ասոնք զիս և իմիներս կառաջնորդին դէպի շուայտութիւն և անառակութիւն, դէպի անզուրկ պայքար մը որ կը վերջանայ յուսահատական մահուան անկողնին մէջ :

ԿՐՕՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Շիրակո համալսարանի նախագահը Մէյսըն կըսէ. «Կրօնքը մեզի համար զազափարներու շարք մը չէ, որ կը յայտնուի մարդու իր եղբոր հետ ունեցած յարաբերութենէն : Ամէն մէկ գիտական աշխատանոց պէտք է յարգալից նուիրուի մեծ ճշմարտութիւնը գտնելու : Մանրագիտակը կրօնքի թշնամի չէ, այլ անոր մէկ գործիքը : Կրօնքի և գիտութեան գործիքները անոնք են, որոնց միջոցաւ ճշմարտութիւնը կրնայ գտնուիլ, ուր որ ալ ըլլայ ան» :

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՈՐ

Բոլոր Հայեր գրեթէ Վարդանանց պատմութեան ծանօթ են : Ասոր համար զայն մանրամասնօրէն նկարագրել պէտք չէ : Միայն աստիճանաբար խօսելով պիտի բաւականանամ :

Ե. Դարու կիսուն Յակոբ Բ.՝ Պարսից հփօր արքան՝ փափաքեցաւ, աշխատեցաւ, հրամայեց և ստիպեց որ Հայերը Քրիստոնէութիւնը թողուն և Արեգակը և Կրակը պաշտեն : Մեր ազնիւ նախահայրերը չուզեցին հրապարակել այս հրամանին և որոշեցին պատերազմիլ : Յակոբ Բ., աշխարհիս է՛ն մեծ տէրութեանց մէկուն հպարտ և աննկուն միապետը, գայրապաւ և ստուար բանակ մը զըրկեց Հայաստանի վրայ զայն բնաջինջ ընելու համար : Միւս կողմէն փառամոլ Վասակը և իր վաստ խորհրդականները զաւա-

ճանութիւններ կը լարէին անգութն Յակոբի դժոխային ծրուիրը յաջողցնելու : Բայց Արարատի անվահեր Լակեղոնացիք հաւատքով և սիրով ռազմաժայրը նետուեցան, իրենց թանկագին արիւնները թափեցին, նահատակուեցան, բայց դատը չահեցան : Հրապաշտութիւնը չկրցաւ մուտ գործել Հայաստանի մէջ, և Հայերը Քրիստոնեայ մնացին :

Վարդանանց պատերազմը Հայկական պատմութեան և աշխարհիս քաղաքակրթութեան ինչ ծառայութիւն մատուց. այս է էական հարցը :

1. Հայ ազգը և հայ Առաքելական Եկեղեցին բնաջնջումէ փրկեց : Եթէ Զորասպարի վարդապետութիւնը նուաճէր Հայ եկեղեցին ո՛չ միայն Հայերը արեւապաշտ պիտի ըլլային, այլ տակաւ առ տակաւ Իրանեան ազգին մէջ լուծուելով իրենց ուրոյն գոյութիւնը պիտի կորսնցնէին : Արմէնեան այս թէրմոպլիէն էր որ 15 դարերէ ի վեր Հայ ազգը պահեց :

2. Ան՝ Յոյն Օրթոտօքս Եկեղեցին ալ պատեց : Եթէ Սասանեան հեթանոսութիւնը Հայաստանը իր ոխերիմ ճիրաններուն մէջ առնէր, եթէ Բիւզանդեան կայսրութեան առջեւ կանգնող այս ամուր թումար խորտակէր, Մեծն Կոնստանդինոսի ընդարձակ երկիրներուն վրայ յարձակելով Յոյն Օրթոտօքս եկեղեցին ալ կրակապաշտ ընելու պիտի յանդգնէր, ո՛վ գիտէ հաւանական է որ Ոսկերիքաներու և Բասիլներու եկեղեցին Զրադաշտական քուրմերու թատերաժայրը պիտի ըլլար :

3. Վարդանանց պատերազմը՝ ընդհանուր պատմութեան մէջ Հայ ազգին ունեցած զիրքը բարձրացուց անոր արժէքը և վարքը բարձրացնելով :

Հայոց տէրութիւնը շատ վար կը մնայ Սարիօններու, Սաղմանասարներու, Սենեքիմներու ահաւոր պետութեան քով : Ան բրնաւ չի կրնար բազդատուիլ Մակեդոնացի մեծ աշխարհակալին Դանուբէն մինչեւ Ինդոս տարածուող ինքնակալութեան հետ, ո՛չ ալ Նեղոսի հովտին մէջ Ռամեսներու թագաւորութեան հետ : Հայաստանը շատ փոքր կը մնայ Կեսարներու պանծալի պետութեան քով : Բայց Մամիկոնեաններու այս ճակատամարտը ազգը Բաբելոնացոյ, Իսրայէլացոյ և

Ինսո-Գերման ազգերու մակարդակին բարձրացուց և Պատմութեան մէջ անոնցինն նման զիրք մը տուաւ անոր:

Այս պիտի ջանամ ապացուցանել հետեւիս խորհրդածութիւնով:

1618 թուականին (Յ.Ք.) համաշխարհային սոսկալի պատերազմ մը ծագեցաւ որ 30 տարի տեւեց: Եւրոպայի զրեթէ բոլոր պետութիւնները մասնակցեցան անոր: Միլիոնաւոր երիտասարդներ չոհ եղան Մարսի մոլեգին կատաղութեան, տասնեակ միլիոններով հարստութիւններ բնաջինջ եղան, մեծ իշխաններ մոխիրի վրայ նստան, Գերմանիոյ 52 միլիոն բնակչութիւնը 12 միլիոնի իջաւ: Վերջապէս եւրոպայի մարտահոգ և նեղմիտ քաղաքացիները խելօքցան, իրենց սխալը բժրոնելով Վէսթֆալիա քաղաքին մէջ հաշտութիւն կնքեցին, որուն առաջին յօդուածը կըսէր, «խղճը ազատ է»: Մինչդեռ Վարդան և իր ընկերները Վէսթֆալիոյ զաշնագրին կնքումէն 12 դարեր առաջ այն դարու ամենամեծ ինքնակալին՝ զոռոյ Յազկերտին՝ խղճի ազատութիւնը ընդունել տուին: Եւ Հայոց պատմութեան արատաւորութեամբ սեւ էջերը իրենց նուիրական արիւնքովը մաքրեցին և Հայ ազգը փառաւոր ազգերու աստիճանին բարձրացուցին:

Վարդանանց պատերազմը ապացուցուց թէ Հայ ազգը Արիական ցեղի կը պատկանի: Մարդկային ազգի ամենէն զեղեցիկ և կատարեալ հատուածը Կովկասեանն է, և անոր ամենէն հանճարեղ և խելացի բաժանումը Արիական ցեղն է. այս ցեղը նոյն իսկ եթէ ժամանակ մը բռնութեան և գերութեան տակ ընկճուի և հիւծի, սակայն վերջապէս զինքը կաշկանդող հաստ շղթաները փշրելով ի զին ամէն զոհողութեան՝ իր ազատութիւնը և իրաւունքները կը վերստանայ: Յունաստանի մէջ Մարաթոնի և Նաւարինի պատերազմները, Անգլիական պատմութեան մէջ Մեծն Ալֆրէտի և Գրոմվելի քաջագործութիւնները, Գերմանիոյ մէջ բարեկարգութիւնը, Ֆրանսական մեծ Յեղափոխութիւնը, Եւրոպայէն Ամերիկա մաքրակրօններու զաղթը, ասոնց ամէնը արիական ցեղի այս ազնիւ յատկութեան ապացոյցն են:

Մեծն Նափոլիոն ըսած է, «Համաշխարհային պատմութեան մէջ ամենէն մեծ և հըռ-

չակաւոր աշխարհակալը Աննիրազ է: Ես, Մեծն Կլարոս, Մեծն Աղեքսանդր, Յուլիոս Կեսար, Թէմուրլէն և այլն, մեծ յաղթանակներ տարինք, բայց մեր հաւելը մեծ և զօրաւոր ազգեր, մեր առջեւ քաջ և ուժեղ բանակներ ունէինք: Իսկ Աննիրազ իր ետեւը տկար և անմիտարան ազգ մը, նախանձոտ և զաւաճան նախարարներ, և իր առջեւ անվարժ և վախկոտ բանակ մը ունենալով պատմութեան ամէնէն մեծ տէրութեան, այն պանծալի Հռովմին վրայ յաղթանակ տարաւ: Եթէ իր երկչոտ, վատ և մատնիչ հայրենակիցները զինքը չստիպէին վերադառնալու՝ այս պատերազմական աննախընթաց հանճարը Կեսարներու անյաղթիլ կոյսրութիւնը կտոր կտոր պիտի ընէր:» Մեր Վարդանն ալ անյաղդող և հաստատամիտ Համիլզար Պարզայի որդւոյն շատ կը նմանի, քանզի մեր հայկական այս Ալֆրէտը իր ետեւը փոքր անմիտարան ազգ մը և մատնիչ վատակ մը և առջեւ պոտիկ բանակ մը ունենալով՝ համարձակեցաւ թագաւորաց թագաւորին դէմ գէնք վերցնելու և կրցաւ հարկադրել զայն Հայկական Վէսթֆալիան ստորագրելու:

Մամիկոնեան սպարապետը երբեք չհաւատարեցաւ այս առիւծասիրտ արծիին, որ Ալպեաններու ամպահերձ բարձունքէն սուսաւ ներով Պօնափարթները հիացուց: Բայց սկզբունքի ազնուութեան և զատի նուիրական կողմէն զերազանցեց այս անչուրական Կորեկեցի ոսկմամբարը, քանզի Հաստրոպոլի անհաշտ և վրիժառու եղբայրը կը մարտնչէր Հռովմէական փառաւոր քաղաքակրթութիւնը տապալելու ու անոր տեղը Կարեկոյնական ստորին քաղաքակրթութիւնը հաստատելու և հօրը վրէժը առնելու համար:

Մինչդեռ Հայկական Լէոնիդաւը կը կրունէր իր սիրիլի ազգին զոյւթիւնէ փրկիլու և Ամենակարող Աստուծոյ ճշմարիտ կրօնքը կրակապաշտութիւնէ ազատելու համար: Այս վին զաղափարականով ոսկմազաշտ նետուեցաւ, զատը շահեցաւ իր թանկագին արիւնքովը:

Յարգանք այս Սուրբ մարտիրոսաց անմահ յիշատակին, որոնց փառատօնը հայ տոհմին ամենէն նուիրական առանձնաշնորհութեամբ պէտք է ըլլայ:

ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հալէպի երկու Հայ Աւետ. եկեղեցիին Մանկանց Կ. Դպրոցի աշակերտները, Ս. Ծընունդի առթիւ՝ հաճելի հաւաքոյթ մը ունեցան Ազգիկէ եկեղեցիին սրահին մէջ: Օր. Լ. Դալֆաեան նուագեց երգեհոնին վրայ, պըզտիկները երգեցողութիւն կատարեցին եւ 23րդ Սաղմոսը միասին արտասանեցին:

Եկեղեցւոյ Կ. Դպրոցի տնօրէնը, Տիար Ն. Շիրիքճեան խօսեցաւ «Միութիւն» նիւթին վրայ, գործնական օրինակով մը բացատրելով զայն: Ապա՝ Տիկ. Ի. Մէրիլ խօսեցաւ Ծընունդի առթիւ նուէր տալու սովորութեան ծագումին եւ անոր նշանակութեան վրայ: Ասկէ վերջ պատիկները մատուցին իրենց նըւէրները: Իւրաքանչիւր պատիկին՝ ոսկեղէն համար մը տպուած ժապաւէն մը տրուեցաւ, եւ հաւաքոյթը վերջացաւ խիստ հրահանգիչ ազգեցողութիւն մը ձգելով ամէնուն վրայ:

Հաջեպ. Քէմփի Հայ Աւետ. եկեղեցին ընկերային հաւաքոյթ մը կը սարքէ Յունուար 20 Ուրբաթ գիշերը: Այս աննախընթաց ընկերային երեկոյթին կը մասնակցին եկեղեցիին բոլոր պաշտօնէութիւնը 75 հոգի մօտաւորապէս, Կ. Դպրոցի ուսուցչական կազմը, Ե. Ք. Զանից Միութեանց վարիչ մարմինները, երգչախումբը, եկեղեցիի բոլոր ժողովներուն անդամները, հաւաքիչներն ու սարկաւազները: Այս հաւաքոյթը մեծապէս կը նպաստէ բոլոր գործիչները ներգաշնակ միութեամբ իրարու կապելու:

Մարաշի մէջ Հայերը, թիւով 60-70 հոգի, ամէն կիրակի կը հաւաքուին նախկին Աստուածաբանական ճեմարանի շէնքին մէջ, ուր տեղին միսիօնարները կրօնական պաշտամունք կը կատարեն: Բայց մանուկները դաստիարակութենէ բոլորովին զուրկ կը մեծնան, քանզի Հայերը դպրոց չունին եւ պետական վարժարաններու ալ չեն յաճախէր, միայն մի քանի պատիկներ անհատներէ մասնաւոր ուսում կ'առնեն:

Կը խնդրուի Նոր Աւետարանի բոլոր յարգելի բաժանորդներէն որ մինչեւ Ապրիլի ըսկիցը իրենց հաշիւը փակեն: Առաջին երեք թիւերը չվերագարձողները կանոնաւոր բաժանորդներ կը համարուին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹԻ

Կիրակի. Բրիտանի Առաքելութիւնը.

Ղուկ. 19.1-10:

«Որդին մարդոյ եկաւ որպէսզի կորսուածը փնտռէ ու փրկէ»: Որոնք են կորսուածները: Յիսուսի գալէ առաջ ամէն մարդ կորսուած է: Բաղաքի մը պէս, որ ապստամբած է եւ թագաւորին բարկութեանը տակ է: Ճամբորդի մը պէս, որ անապատի մէջ իր ճամբան կորսուեցուցած է: Հիւանդի մը պէս, որ անբուժելի է: Բանտարկեալի մը պէս, որ մահուան դատապարտուած է: Երբ Յիսուս այսպիսի մէկու մը տան եւ սրտին մէջ զայն, հոն ապաշխարութիւն, փրկութիւն եւ մեծ ուրախութիւն կը լլայ: Դուն ունի՞ս այս ուրախութեան հաւաստիքը:

Աղօթք. Ո՛վ Սբ. Հոգի, Մեր սիրտերուն, տուներուն, եկեղեցիներուն շնորհէ փրկուածներուն յատուկ ուրախութիւնը: Ամէն:

Երկուշաբթի. Որդի Աստուծոյ. Յովն. 1.29-34:

Ճշմարիտ եւ ականատես վկայութիւնով հաստատուած է թէ Յիսուս Որդի Աստուծոյ է: Անոր սէրը սահման չունի, փրկութիւնը կատարեալ է, Սուրբ սիրով նա փրկեց մեզ: Դուն զԱյն կը սիրե՞ս անկեղծ սիրով, պատրափոս եւ ծառայելու Անոր անունով, Անոր հետ յարաբերելով կեանքդ ազնուացելով է:

Աղօթք. Ո՛վ զու աշխարհի ճշմարիտ Որդին, դուն՝ որ քու երեսիդ պայծառացումովը երկրի մէջ եւ երկրի վրայ ամէն բան կուրախացրես, փայլէ մեր հոգիներուն մէջ ալ, որպէս զի մեր խաւարը լոյսի եւ արտմութիւնը ուրախութեան փոխուի: Անուանդ համար: Ամէն:

Երեքշաբթի. Աստուծոյ Օրհնիչը մեր ներսիցին: Սաղ. 40.6-11:

Մարդիկ երբեմն կըսեն թէ չեն աղօթեր, քանզի Աստուած իրենց համար իրական չէ: Սակայն, աւելի շիտակ է ըսել թէ Աստուած իրենց համար իրական չէ, ինչու որ չեն աղօթեր: Եթէ մինչեւ իսկ Աստուծոյ զոյգութեան հաւատանք, բայց Անոր չաղօթենք, Անոր ներկայութիւնը չենք զգար: «Ո՛վ Աստուած, դուն ես իմ Աստուածս», ըսելով աղօթէ, դուն քու փորձառութեամբդ կը գիտնաս զԱյն:

Աղօթք. Ո՛վ Աստուած, մեզի հնազանդութեան հոգի տուր, որ քու օրէնքդ մեր սիրտերուն մէջ գրենք, զքեզ փորձով մեր Տէրը

լու զրդեց, հիւանդութիւնը, իր լսածը թէ հաւատքը: Ան գաղտնի գալ փորձեց: Ծածուկ կերպով Անոր հագուստին դաշխլ լինէ կը նշանակէ, ապա լինէ պատահեցաւ իրեն: Յիսուս լինէ պատահեցաւ: Յիսուս երբէք չուզեց որ ան գաղտնի հաւատացող մը մնայ, վերջը կինը յօժարեցաւ ճանչցուելու եւ Յիսուս ուզեց որ ան հասկնայ թէ ինք ինչպէս բուժուեցաւ (24):

2) Այս հօր հաւատքը յայտնի էր (22, 23): Յիսուս կը հետաքրքրուէր տեսնելու թէ մարդուն հաւատքը Է՞ն դառն լուրի մը առջեւ չըխախտի (տես Յովհ. 11. 23. 39, 40): Կ'իշխուի թէ չխախտեցաւ, բայց ինչ փորձանքի մէջ գտնուեցաւ ան երբ գէպի տուն ճամբուն վրայ էր, երբ ապա տունը հասան եւ երբ ամէն ոք Յիսուսը ծագրեց: Երեւակայէ Յիսուսը այս բոլորներուն մէջ եւ ապա երբ Ան աղջիկին խօսեցաւ եւ անոր հոգին զարձեւալ եկաւ (Ղուկ. 8. 55): Յիսուսի քով հինգ մարդեր կային, որոնցմէ մէկն էր Պետրոս: Ամէնը զարմացան (42), Յիսուս զարմացաւ, ինչու:

3) Տես թէ ինչպէս Յիսուս բազմութիւնը ձգեց որ անհատներուն ծառայէ (21), թէ ինչպէս ամբողջ իրեն համար բան մը չէր, բայց իրեն վստահող անհատ մը ամէն ինչ էր (30), եւ թէ ինչպէս նոր գէպքի մը պարագային բազմութիւնը ցրուեց (34): Ինչու Յիսուս միայն երեքները ընտրեց իրեն ընկերանալու: Յիսուսի նպատակը մարդերու անհատապէս օգնել էր:

Դասեր. 1) Ուէ արդար եւ բարի բան մը ընելու հաւար ոյժ կայ, Յիսուսով այս ոյժը բոլորին տրամադրելի եղած է: Չենք կրնար ըսել թէ Անոր մեկի օգնելու նպատակին եւ փափաքին ռահմանները որչափ են: Մեր բոժինը միայն այս է, կատարեալ վստահութեամբ Անոր դիմել: 2) Եկեղեցին պէտք է անհատներու վրայ կեդրոնացնէ իր հետաքրքրութիւնը:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՏԱՍՆԵՐԿՈՒՔԸ

Մատ. 11

Յաջակապիժ. 1) Աչակերտները կը կանչուին (1. 16-20, 2. 13-14): 2) Առաքեալները կ'ընտրուին (Մարկ. 3. 13-19): Առաքեալները կը շրջուին (Մարկ. 6. 7-13):

Խորհրդածութիւն. 1) Այս մարդերէն երեքը արդէն Յիսուսը կը ճանչնային (Յովհ. 1. 40-42): Ինչ զիտես միւս երկուքին մասին: Այս «կոչ»ը կեանքի փոփոխութեան համար հրաւէր մ'էր: Անոնք պարզապէս Յիսուսի վրայ լաւ չխորհեցան, այլ Անոր աշակերտացան: Իսկ Յիսուս գտնոնք մասնաւորապէս պիտի կրթէր իրեն պէս մարդերու որսորդներ ըլլալու: 2) Շատեր Յիսուսի կ'աշակերտէին եւ կը սորվէին իրմէ, անոնցմէ տասներկուքը ընտրեց, որոնք բաւականաչափ պատրաստուած էին որոտը սկսելու համար: Առաջին հինգերը անոնց մէջ էին: Այս տասներկուքը 1) իրեն պիտի ընկերանային, 2) պիտի քարոզէին, 3) հիւանդութիւններու եւ չար զօրութիւններու վրայ իր ոյժը պիտի ունենային եւ զայն պիտի զործածէին: Անոնք իրր իր ներկայացուցիչները պիտի երթային: Մարկ. 9. 18 ի մէջ կը տեսնենք որ անոնցմէ ոմանք չյաջողեցան: Գործք. 3. 1-8 ի մէջ Պետրոս յաջողեցաւ: 3) Երբ Յիսուս գտնոնք զոյգ զոյգ զրկեց, իր հրահանգներով կը ձգտէր գտնոնք միշտ իրր իր ներկայացուցիչները զործօն պահել: Անոնք լաւ պատրաստուած ճամբորդներ չպիտի ըլլային, ոչ ալ անհաճելի հիւրեր (10), այլ ամէն տեղ իրր աւետարանիչներ պիտի երեւային (11):

Մարկոս կ'ըսէ թէ անոնք տալիսարու թիւն քարոզեցին, ինչ որ իրենց միտքերուն մէջ եւ Յիսուսի քարոզներուն մէջ առաջին տեղը կը զբաղէր:

Դասեր. 1) Յիսուսի նպատակն էր խումբ մը պատրաստել, որ կարող ըլլայ իր զործը շարունակել, այսինքն անհատներ շահիլ, իր պատգամը քարոզել, մարդերու օգնել անոնց վրայ ճշող ոյժերուն յաղթելով: Եկեղեցիի մը համար ճշմարիտ գաղափարական մը եւ ծրագիր մըն է այս: Այսօր մեր միջավայրներուն մէջ ոյժեր կան, որ կը ճնշեն մարդիկու վրայ եւ կ'արգիլեն մարդերը Քրիստոսի մէջ նոր մարդեր ըլլալէ, եկեղեցին պէտք է խորհի այս մասին: 2) Յիսուսի կերպը այս էր, ա) մարդերը իրեն կապել. բ) իր աղղեցութեամբ գտնոնք փոխել. գ) անոնց ոյժ տալ եւ զրկիլ գտնոնք որ ուրիշները փոխեն: Եկեղեցին այսօր շատ առաքեալներ պէտք է ունենայ: Յիսուսի մարդ պատրաստելու կերպը այսօրն ալ նոյնն է:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆԵՐՈՒՄԸ

(Շարունակում նախորդ թիվին):

Մարգը ներս մտաւ, իր կռնակի բեռը զգուշութեամբ մը կախեց խրճիթին մէկ անկիւնը, մօտեցաւ կրակին ու նստած փոքր կոշտ աթոռի մը վրայ՝ «Արդեօք տեսա՞յ զայն, կ'ըսես, այո աղջիկս, տեսայ, և իթէ ան ալ զիս տեսած ըլլար, այս ոտքերս անգամ մ'ալ չպիտի կրնային զիս հոս բերել», ըսելով իր թմրած մտաները չփիւ սկսաւ:

Աղջիկը իր հօրը կերակուրը բերաւ, ու ան սկսաւ ուտել իր ընթրիքը՝ որ քիչ մը ապուրէ և կտոր մը թուխ հացէ կը բաղկանար:

«Աղջիկս», շարունակեց մարդը, «թագաւորը որսի ելեր էր այս գիշեր, իր ճիւղակ ձիովը իմ քովէս անցաւ, մեր երկուքին մէջ տեղը 10 քայլ մնացած էր, փառք Աստուծոյ գիշերը մութ էր և ծառերը շատ խիտ էին. հետեւաբար ան զիս չտեսաւ, իթէ ոչ...» ու լռեց. իր ըսելիքը զէմքէն կը հասկցուէր:

Քանի մը ըսպէ լռութիւնը տրեց խրճիթին մէջ...:

«Ա՛խ, հայրիկ», ըսաւ վերջապէս աղջիկը, «Ինչո՞ւ տակաւին կը մնանք այս չարաշուք անտառին մէջ, ես կը վախնամ այս ախտը միայնութենէն. կ'աղաչեմ հայրիկ, այլ եւս մեր գիւղը երթանք, հոն մեր առաջուտն հաճելի կեանքը ապրինք նորէն, ի՛նչ գեղեցիկ էր ան կեանքը», ու աչքերը արտասունքով լեցուեցան:

«Չես հասկնար, Մարիա, զուգեա հոս»

կնար թէ ես փախստական եմ, այն օրը որ անգամ մը բռնուիմ իմ կենացս վերջին օրն է. չե՞ս տեսնուի ադ եղնիկը, ո՞վ կրնայ թագաւորին արգիլեալ հողին վրայ որսորդութիւն ընել և ողջ մնալ... սակայն զուգե, Մարիա, պէտք չունիս վախնալու, թագաւորը զիս չի կրնար գտնել, մինչև իսկ իթէ այս խրճիթը գտնէ»: Այս ըսելով ոտքի ելաւ, «գիշեր բարե» ըսաւ իր աղջկան և հիւզակէն զուրս ելլելով խաւարին մէջ ուղղուեցաւ դէպ ի այն թաքստոցը՝ որ իրեն իւր ննջարան կը ծառայէր:

Հօրը մեկնելէն վերջ Մարիա առանձին նստած կը մտածէր: Ի՛նչ գեղեցիկ յիշատակներ ունէր ան, որոնք այժմ անցեալին միայն կը պատկանէին, և որոնցմէ զրկուած էր յաւերտեան պէս: Ան կը յիշէր իր սիրական մայրիկը՝ որուն տաւաթամ մահը զրկած էր աղջիկը իր բոլոր երջանկութենէն... ու կը խորհէր... Ծնունդի այդ գիշերը... միայնակ ու տխուր: Այդ երջանիկ անցեալին մէջ Ծնունդի իր կուսակցները, իր մայրը սովոր էր իրեն ըսել, «Մարիա՛, աղջիկս, ճրագ մը զիր սա պատուհանը. ո՞վ գիտէ, կարելի է ցուրտին ու խաւարին մէջ իր ճամբան կորսնցուցած անցորդ մը այսլայսը տեսնէ ու տոտր միջոցաւ մահէն ազատի, չէ՞ որ Ծնունդի գիշերը հրեշտակներն ալ վար իջած կ'ըլլան, թիւրիւս այս կերպով անոնց ալ ծառայութիւն մը կ'ընեն»:

Ու Մարիա մոմն առաւ, ու զայն խրճիթին պատուհանը դրաւ...:

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ինչո՞ւ եկեղեցի կ'երթաւ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Վարդանանց Պատկեր Կ. ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկշաբաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. ձ. Խրրլորեան ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիտ
Արտասահման » » 1 Տուար
Հասցէ—

NOR AYEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE